



05/106.1-13
1106.1/748-13

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 73

« 04 » 02 2019թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ԿՈԼԵԳԻԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 54 ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին
մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N
740-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների
նախարարին կից կոլեգիա՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարի 2018 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի
Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին կից կոլեգիա ստեղծելու և
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2016
թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1372-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ
54 հրամանը:
3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ